ԱՐԹՈՒՐ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅԱՆ ԱՅԼԸՆՏՐԱՆՔՆԵՐԸ ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՀԱՐՑԵՐԸ

Ինչպես գիտենք, քաղաքացիությունը հանդես է գալիս որպես անհատի հիմնական կարգավիճակ, որը ձեռք է բերվում նրա օբյեկտիվ դրության (պետության հետ ունեցած կապի) հիմքով կամ տրվում/շնորհվում է պետության կողմից: Սակայն ակնհայտ իրողություն է, որ ոչ բոլոր մարդիկ ունեն քաղաքացիություն և կամ առավել հաճախ ապրում են իրենց քաղաքացիության երկրներում: Վերջին ժամանակներում ինչպես գիտահանրամատչելի գրականության մեջ հանդիպող, այնպես և միջազգային տարբեր ատյանների կողմից բարձրաձայնվող հրապարակումներում հնչեցվում է այն միտքը, որ պետությունների հիմնական օրենքում՝ Սահմանադրությունում կամ դրան համարժեք օրենսդրության մեջ պետք է անպայմանորեն սահմանվեն ոչ միայն տվյալ «պետության քաղաքացիների», այլ առհասարակ մարդկանց համար նախատեսվող կարգավիճակները՝ հանձինս այն ամբողջացնող իրավունքների, ազատությունների և լիազորությունների: Նման մոտեցումը, որն արդեն իսկ ամրագրված է բազմաթիվ ժողովրդավարական երկրների հիմնական օրենքներում, թեպետ իր արտացոլումը չէր գտել 1995թ.-ի հուլիսի 5-ին ընդունված ՀՀ գործող Սահմանադրության մեջ, այդուհանդերձ նկատվում է նման մոտեցման գերակշռությունը իրեն ժողովրդավարական հռչակած Հայաստանի քաղաքական իշխանությունների մոտ, ինչի փաստացի վկայությունն է 2003թ.-ի մայիսի 25-ին համաժողովրդական հանրաքվեի դրված ՀՀ Սահմանադրական բարեփոխումների նախագծում տեղ գտած համապատասխան փոփոխությունը: Այսպես ՀՀ գործող Սահմանադրության Գլուխ երկրորդի (որը վերաբերում է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներին և ազատություններին) Հոդված 15-ում ամրագրված է. «Քաղաքացիներն անկախ ազգությունից, ռասայից, սեռից, լեզվից, դավանանքից, քաղաքական կամ այլ հայացքներից, սոցիալական ծագումից, գույքային կամ այլ դրությունից, ունեն Սահմանադրությամբ և օրենքներով սահմանված բոլոր իրավունքները, ազատությունները և պարտականությունները»[1], մինչդեռ 2003թ.-ի մայիսի 25-ին համաժողովրդական հանրաքվեի դրված ՀՀ Սահմանադրական բարեփոխումների նախագծում գրեթե տառացիորեն կրկնվող նույն Գլխի 14.1 Հոդվածում «Քաղաքացիները» բառը փոխարինված է «Մարդիկ» բառով[2] (*ընդգծումը՝ Ա.Մ.*): Եվ թեպետ ՀՀ Սահմանադրական բարեփոխումների նախագիծը քննություն չբռնեց և տապալվեց, այդուհանդերձ այս առումով առաջարկվող փոփոխությունները թերևս կարելի է համարել այն փոքրիկ առանցքը, որի շուրջ թե՛ ընդդիմությունը և թե՛ դիմությունը դրսևորում էին միասնական դրական դիրքորոշում:

Ըստ էության որևէ պետությունում, առանց տվյալ պետության քաղաքացիության բնակվող կամ գտնվող մարդկանց մեծամասնությանը կարելի է դասակարգել երկու հիմնական խմբի՝ սոցիալ-տնտեսական պայմանների պատճառով կամ տնտեսական ավելի բարենպաստ պայմանների ակնկալիքով իրենց քաղաքացիության երկիրը լքողների, ինչպես նաև տարբեր պատճառներով (այդ թվում՝ ռասայական, ազգային, կրոնական, սոցիալական որևէ խմբի պատկանելության կամ սեռական փոքրամասնության, ինչպես նաև քաղաքական հայացքների համար) հետապնդման ենթարկվող կամ նման վտանգի ենթակա անձանց, որոնք տարբեր երկներում ստանում են տարբեր կարգավիճակներ՝ սկսած ժամանակավոր կացությունից, փախստականի, քաղաքական ապաստանի կարգավիճակներից՝ վերջնահաշվում շատ հաճախ ավարտվելով ընդունող երկրի կողմից լիիրավ քաղաքացիության տրամադրմամբ: Այս կամ այն պատճառով իր տարածք ներգաղթած կամ ժամանակավորապես գտնվող անձանց ընդունումը և քաղաքական կարգավիճակի տրամադրումը ուղղակիորեն կապված է պետության ինքնիշխանության հետ և հանդիսանում է պետությունների ինքնիշխան իրավունքի բաղկացուցիչը:

Ներկայում քաղաքական ապաստան և փախստականի ներգաղթային կարգավիճակների միջև առկա նմանություններն ու տարբերությունները բավականին հաստակ են արտացոլված ԱՄՆ-ի գործող ներգաղթային օրենսդրության մեջ, որը ստորև կներկայացվի համացանցում տեղակայված իրավագիտական բառարաններում առկա տեղեկատվության հիմքով: «Մարդիկ, որոնք արդեն իսկ գտնվում են Միացյալ Նահանգներում և վախենում են իրենց երկրներում հետապնդվելուց, իրավունք ունեն դիմելու քաղաքական ապաստանի: Բոլոր նրանց, ովքեր իրենց բնակության երկրներում հետապնդվելու վախի պատճառով են ցանկանում գալ Միացյալ Նահանգներ և դիմում են դրա համար դեռևս Միացյալ Նահանգներից դուրս, իրավունք ունեն դիմելու փախստականի ներգաղթային կարգավիճակի»[3]: Սեփական երկրում հետապնդման ենթարկվելու կամ հետապնդման վտանգի ենթարկվելու դրդմամբ Միացյալ Նահանգներում ժամանակավոր կարգավիճակ ստանալու իրավունքի շուրջ բացատրություն է պարունակվում մեկ համացանցում տեղակայված մեկ այլ կայքում, որտեղ հղում անելով 1981թ.-ին ԱՄՆ Կոնգրեսի կողմից ընդունված Փախստականների մասին ակտին՝ քաղաքական ապաստանի և փախստականի ներգաղթային կարգավիճակի տարբերությունների վերաբերյալ տրվում է գրեթե նույնական բացատրություն: «Ապաստանը կամ փախստականի կարգավիճակը նախատեսվում է շնորհել որևէ մեկի, _ նշված է այդ ակտում,_ ով գտնվում է իր քաղաքացիության երկրից դուրս (կամ արդեն իսկ Միացյալ Նահանգներում), ով ի վիճակի չէ կամ չի ցանկանում վերադառնալ՝ հետապնդվելու կամ հետապնդման ենթարկվելու խորքային վախի պատճառով՝ կապված ռասայի, ազգության, որոշակի սոցիալական խմբի անդամության հետ կամ քաղաքական հայացքների համար: Փախստականի կարգավիճակ և քաղաքական ապաստան

հայցողների հիմնական տարբերությունն այն է, որ առաջինը ստանալու հայցադիմումը կատարվում է դիմորդի հայրենի երկրից դուրս, մինչ քաղաքական ապաստան ստանալու հայցադիմումը ներկայացվում է արդեն Միացյալ Նահանգների տարածքում լինելու դեպքում»[4]: Թեպետ այսօր ԱՄՆ-ի համանմանությամբ աշխարհի բազմաթիվ երկրներում փախստականի ներգաղթային կարգավիճակը իրավական առումով շատ քիչ է տարբերվում քաղաքական ապաստանից, սակայն իրենց պատմական ակունքներով այս երկու կարգավիճակներն անցել են միմյանցից զանազանվող ուղիներ: Ի տարբերություն առաջինի, «քաղաքական ապաստան» հասկացությունը զարգացել է որպես պետությունների դիվանագիտական հարաբերությունների կարևոր բաղադրամաս, որն անցյալում տրամադրվում էր բացառապես քաղաքական դրդապատճառներով: Այն որևէ կոնկրետ պետության համար հանդիսացել է արդյունավետ միջոց՝ պատսպարելու այս կամ այն երկրում իրեն աջակցողներին, որոնց կյանքը վտանգվել է այդ երկրում իշխանափոխության կամ այլ իրադարձությունների պատճառով: 1960-ական թթ.-ին հակագաղութային պայքարի արդյունքում աշխարհի քաղաքական քարտեզի մանրատման պայմաններում քաղաքական ապաստանը լայն կիրառում գտավ նախկին մետրոպոլիաների կողմից իրենց նախկին գաղութների նախկին ընտրախավերի ներկայացուցիչներին պատսպարելու առումով: Համաձայն Մոսկվայում 1986թ.-ին հրատարակված «Դիվանագիտական բառարանում» զետեղված բացատրության՝ «Ապաստան տրամադրելու իրավունքը պետությունների ինքնիշխան իրավունքն է (ժամանակակից միջազգային իրավունքի համընդհանուր նորմերից բխող սահմանափակումներով հանդերձ) քաղաքական ապաստան տրամադրել այն անձին, որը համապատասխան հայցով դիմել է տվյալ երկրին: Քաղաքական ներգաղթողին ապաստան տրամադրելով՝ պետությունը պետք է վերջինիս շնորհի իրավունքներ, որոնք ապահովում են բնականոն պայմաններ՝ անվտանգ բնակության համար իր սեփական տարածքում (քաղաքական ներգաղթողի չվերադարձնելը, երկրից չարտաքսելը այն երկիր, որը նա լքել է կամ որտեղ նա կարող է ենթարկվել հետապնդման, քաղաքական ներգաղթողին իրավունքների և ազատությունների տրամադրում ոչ պակաս, քան այն ծավալով, որով այդ երկրում օգտվում են օտարերկրացիները)»[5]:

Դարեր շարունակ միջազգային քաղաքականության ուղեկիցն է հանդիսացել նաև քաղաքական աքսորը: Այն հանդես գալով որպես պետական իշխանության կողմից քաղաքական այլախոհության, իշխանության անցածների կողմից իրենց հակառակորդների դեմ քաղաքական հաշվեհարդարի «համեմատական հումանիստական» միջոց՝ կիրառում է գտել բազմաթիվ երկրներում՝ ունենալով ինչպես ներքին (երբ աքսորում էին երկրի հեռավոր շրջաններ, ծովային պետությունների դեպքում՝ հեռավոր կղզիներ), այնպես և արտաքին (երբ արտաքսում էին երկրից) բնույթ: Հայ ժողովրդի նոր շրջանի պատմությունից հայտնի են Ցարական Ռուսաստանում իրականացվող աքսորները (Հարավային

Կովկասը ևս ծառայում էր որպես աքսորավայր), որոնք հետագայում կատարելագործվեցին և իրենց մասշտաբներով աննախադեպ բնույթ ընդունեցին խորհրդային տարիներին և հատկապես Ստալինյան վարչակարգի ժամանակաշրջանում, երբ աքսորի էին ենթարկվում ամբողջ ժողովուրդներ: Կանգ չառնելով ներքին աքսորների վրա՝ նշենք, որ տվյալ պետությունից քաղաքական արտաքսման կամ ասքորի դեպքում քաղաքական կարգավիճակի առումով մենք գործ ունենք երեք կողմի՝ արտաքսող պետության, ընդունող պետության և արտաքսման ենթարկվող անձի հետ: Ընդ որում պետք է արձանագրել, որ ընդունող պետության պարագայում կարգավիճակի տրամադրման առումով էական չէ, թե տվյալ անձը/անձինք իրենց քաղաքական հայացքների համար կամովին են լքել իրենց քաղաքացիության երկիրը, թե արտաքսվել են այնտեղից: Այս վերջին տարբերակի առկայությունը պարզապես կարող է տվյալ անձին/անձանց համար դյուրացնել քաղաքական ապաստանի կամ փախստականի ներգաղթային կարգավիճակի ստացումը: Եվ եթե ընդունող պետության դեպքում քաղաքական աքսորի ենթարկված անձը ի վերո թվարկյալ տարբերակներով ստանում է փախստականի ներգաղթային կամ քաղաքական ապաստանի կարգավիճակ՝ կախված կոնկրետ իրավիճակից, ապա քաղաքական աքսորը՝ որպես յուրօրինակ կարգավիճակ է ծառանում քաղաքական աքսորն իրականացնող պետության և առաջին հերթին աքսորի ենթարկվող անձի/անձանց համար: Ինչպես նկատում է մերօրյա վերլուծաբան Մարթա Ի.Խիմենեզը. «.... այս նեղ, քաղաքական իմաստով, աքսորը գիտակից որոշումների հետևանքն է բոլոր նրանց կողմից, ովքեր արտաքսում են իրենց թշնամիներին, ովքեր արտաքսվում են, կամ անգամ՝ ովքեր մեկնում են, եթե իշխանությունները թույլատրել են այդ անել: Պարտադրված, թե կամավոր ընտրված՝ աքսորն այս առումով պայման է, իրական տեղակայում քաղաքական, սոցիալական և աշխարհագրական տարածքում: Դա ինքնություն չէ՝ միջնորդաբար տրված մարդահամար անցկացնող պաշտոնյայի, կամ լավ մտածող սոցիոլոգի ու գրական տեսաբանի կողմից: Բոլոր նրանք, ովքեր ենթարկվել են աքսորի, գիտեն և ընդունում են աքսորը որպես իրենց կարգավիճակ և իրենց դերակատարություն՝ որպես իրենց տեղը պատմության մեջ, քանզի դա իրենց ճակատագիրն է, թե նրանք ով են, և այդ նրանք գիտեն»[6] (*ընդգծումը՝ Ա.Մ.*): Որպես օրինակ բերելով 1959թ.-ի Կուբայական հեղափոխությունից ցայսօր այդ երկրից ԱՄՆ կատարված ներգաղթի չորս հիմնական ալիքները, որոնցից միայն առաջինի դեպքում էին գերակշռում քաղաքական դրդապատճառները, հեղինակը կարծիք է հայտնում, որ տնտեսական և սոցիալական պայմանների պատճառով Կուբան լքածներին ևս կարելի է համարել քաղաքական աքսորի զոհեր՝ այն պատճառաբանությամբ, որ այդ երկրում ստեղծված սոցիալական և տնտեսական անբարենպաստ պայմանները ևս քաղաքական իրադարձությունների արդյունք են:

Սկզբունքորեն մերժելով նման մոտեցումը, որի ընդունման դեպքում, ըստ էության, աշխարհի բոլոր միգրանտներին իրավունք է վերապահվում հավակնել դասվելու քաղաքական աքսորի զոհերի շարքին, քանզի նրանց բռնի կամ կամովին արտագաղթի հիմքում այս կամ այն կերպ ընկած է նաև քաղաքական գործոնը, էական է կանգ առնել նույն Մարթա Ի.Խիմենեզի այն դատողության վրա, համաձայն որի անհատների և խմբերի կողմից իրենց կարգավիճակի և ինքնության քաղաքական աքսոր անվանելն ու ընդունելը սերտորեն կապված է նրանց ընդունող պետության և նրանց արտաքսած պետության քաղաքական հարաբերությունների հետ: Որպես օրինակ իրար են հակադրվում երկու փաստեր. Խորհրդային Միությունից հիմնականում սոցիալ-տնտեսական պատճառներով լքող արվեստագետների ընդունումը արևմտյան երկրներում, որտեղ մեծ խանդավառությամբ ողջունվում էր «տաղանդի ուժին համապատասխան վարձատրվելու» նրանց նախաձեռնությունը այն դեպքում, երբ ամենևին համանման «ընդունելության չէին արժանանում» Հայիթից ԱՄՆ ներգաղթողները, որոնց քայլերը մարդկային խիզախումի դրսևորումներ էին»[7]: Պետք է նշել, որ հանդես գալով առաջին հերթին որպես քաղաքական արտաքսման ենթարկված անձի կամ խմբի սոցիալ-հոգեբանական կարգավիճակ և մինչև իսկ ինքնություն քաղաքական աքսորը այս առումով կայուն չէ, և ապաստանող երկրում բնակության որոշակի ժամանահատվածում այն կարող է աստիճանաբար նվազել ու անէանալ քաղաքական աքսորի ենթարկվածին վերածելով շարքային արտագաղթողի:

Քաղաքացիության այլընտրանքների շարքում եզակի օրինակ են «Նանսենյան անձնագրերը»: Մարդկության պատմության մեջ աննախադեպ էր 1915թ.-ի ՀԱՅՈՑ ՄԵԾ ԵՂԵՌՆ-ից մազապուրծ եղած և հիմնականում Մերձավոր Արևելքում և Եվրոպայում ապաստան գտած արևմտահայության բեկորներին 1922թ.-ին Ժնևում (Շվեյցարիա) հրավիրված համաժողովի որոշմամբ Ազգերի Լիգայի կողմից նորվեգացի մեծ հումանիստ և հայասեր Ֆրիտյոֆ Նանսենի նախաձեռնությամբ անձնագրերի տրամադրումը: Այդ անձնագրերը, որոնք պատմության և հայ ժողովրդի հիշողության մեջ մտել են որպես «Նանսենյան անձնագրեր», այն ստացող հայերի համար հանդիսանում էին անձը հաստատող փաստաթուղթ, թեև չունեին անձին քաղաքացու քաղաքական կարգավիճակ տալու արժեք: «Նանսենյան անձնագրեր ստացած անձինք օգտվել են համաժողովի մասնակից երկրներում բնակվելու, ազատ տեղաշարժվելու իրավունքից. նրանց նկատմամբ դադարել են գործել քաղաքացիություն չունեցողների համար նախատեսված սահմանափակումները: Ազգերի լիգայի որոշմամբ (1924թ.-ի հուլիսի 12) Մեծ եղեռնից փրկված շուրջ 320 հազար հայեր, որոնք դեգերում էին աշխարհի տարբեր երկրներում, ստացել են Նանսենյան անձնագրեր»[8]: Փաստորեն, Նանսենյան անձնագրերը հանդես են գալիս որպես քաղաքացիությանը իրենց տեսակի մեջ յուրահատուկ այլընտրանք, որպես անհատների համար յուրահատուկ քաղաքական կարգավիճակ: Իր արժեքով,

նախատեսած իրավասություններով և լիազորություններով ընկած լինելով քաղաքացիության և փախստականի քաղաքական կարգավիճակների միջև, Նանսենյան անձնագրերն ըստ էության կոչված էին լուծում տալու առաջին աշխարհամարտի տարիներին մարդկության դեմ իրագործված մեծ չարագործություններից հետո իրենց քաղաքացիության երկրներից բռնագաղթված և այնտեղ հետապնդման և բռնության վտանգի ենթակա մարդկանց, այդ թվում և եղեռնագործությունից հրաշքով փրկված և աշխարհով մեկ դեգերող հայերի քաղաքական կարգավիճակի խնդրին:

Անհատի քաղաքական կարգավիճակի տեսանկյունից առանձնահատուկ հետաքրքրություն է ներկայացնում նաև երկքաղաքացիությունը կամ երկակի քաղաքացիությունը, որի պարզաբանումը կիրառական նշանակության առումով էլ ավելի է կարևորվում մերօրյա Հայաստանում՝ աշխարհասփյուռ հայության առկայությամբ պայմանավորված: 1991թ.-ի սեպտեմբերի 21-ին Հայաստանի երրորդ Հանրապետության ձևավորումից ի վեր երկքաղաքացիության հարցը շրջանառության մեջ դրվեց նաև հայ իրականության մեջ: Այդուհանդերձ այս հարցը, որը կոչված էր լուծում տալու աշխարհասփյուռ հայությանը Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն շնորհելու խնդրին, բազմաթիվ շահարկումների ենթարկվելով և ընդգրկվելով (շատ դեպքերում որպես առանցքային կետ) բազմաթիվ կուսակցությունների և ՀՀ Նախագահի թեկնածուների նախընտրական ծրագրերում, ցայսօր չի ստացել իր լուծումը: 1995թ.-ին ընդունված ՀՀ Սահմանադրության մեջ հստակ ամրագրված է. «Հայաստանի Հանրապետության քաղաքացիության ձեռքբերման և դադարման կարգը սահմանվում է օրենքով: Ազգությամբ հայերը Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն են ձեռք բերում պարզեցված կարգով: Հայաստանի Հանրապետության քաղաքացին միաժամանակ չի կարող լինել այլ պետության քաղաքացի»[9]: Այնուհետ 2003թ.-ի մայիսի 25-ին համաժողովրդական հանրաքվեի դրված Սահմանադրական փոփոխությունների նախագծում այս և նման ձևակերպումներն առհասարակ բացակայում են[10]: Եվ փաստորեն եթե ազգությամբ հայերին պարզեցված կարգով ՀՀ քաղաքացիություն տալու հնարավորությամբ 1995թ.-ի Սահմանադրությունը որոշակի իրավական հիմք էր ստեղծում երկքաղաքացիության համար, ապա 2003թ.-ի Սահմանադրական բարեփոխումների նախագիծը այդ առումով արձանագրում է հետքայլ: ՀՀ Երկքաղաքացիությունը բացասող նման մոտեցումը ըստ էության ինչպես Հայաստանում, այնպես և աշխարհի շատ երկրներում պայմանավորված է անհատի քաղաքական կարգավիճակի փոփոխման հետ կապված խնդիրներով, այն է՝ տվյալ երկրի քաղաքացիության պահպանմամբ այլ երկրի քաղաքացի դառնալու պայմաններում անհատի իրավունքների, ազատությունների և հատկապես պարտականությունների երկատման վտանգով: Իրական կյանքում թեպետ և առանձին քաղաքական գործիչների կողմից նման մոտեցումը պայմանավորված է առավել առարկայական այնպիսի հարցերով, ինչպիսիններից է

զորօրինակ զինապարտության պարտականությունից խուսափելու բացառումը, այդուհանդերձ քաղաքագիտության տեսանկյունից առավել կենսական է երկքաղաքացիության հարցի դիտարկումը տվյալ անհատի կողմից իր քաղաքացիության երկրում քաղաքական իշխանության ձևավորման, այդ երկրի մյուս քաղաքացիների հետ որպես մեկ միասնական քաղաքական հանրության մաս կազմելու խնդիրների համատեքստում: Այս վերջին՝ այսպես կոչված «պատկանելիության խնդիրը» անմիջականորեն կապված է քաղաքական ինքնության հետ, որը համաձայն համընդհանուր հավանություն գտած տեսակետի ենթադրում է, որ քաղաքացիությունը պարզապես իրավունքներ և պարտականություններ ամրագրող կարգավիճակ չէ, այլ դրանք կյանքում կիրառության դնելու գործընթաց, հետևաբար և միևնույն անձը չի կարող իր քաղաքացիությունը հավասարապես իրացնել երկու պետություններում: Իսկ զինապարտության հետ կապված դեռևս 1963թ.-ին ընդունված «Բազմակի քաղաքացիության դեպքերի կրճատման և բազմակի քաղաքացիության դեպքում զինապարտության մասին» միջազգային կոնվենցիան երկու և ավելի կողմերի քաղաքացիություն ունեցող անձանց իրավունք վերապահելով հրաժարվել դրանցից մեկից, ամրագրում է նման անձանց կողմից զինապարտության իրավունքի իրացումը իրենց քաղաքացիության պետություններից միայն մեկում[11]:

---

[1] Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն, Գլուխ 2, «Մարդու հիմնական իրավունքներն ու ազատությունները» Հոդված 14, Երևան, «Ամարաս» հրատարակչություն, 2000, էջ 7:

[2] Տես «Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն (փոփոխություններով)», Նախագիծ, *Հավելված* «Տեսակետ-ՍԻԺԻ-ի» 11-րդ համարի, Երևան, «Փրինթինֆո» հրատ., Մայիս 2003, էջ 6:

[3] Political Asylum and Refugees, http://legalmatch.com/law-library/political-asylum-and-refugees.html, 10.04.2003, 1.

[4] Political Asylum & Refugee Status (*Seeking Asylum in the USA*), http://www.rapidimmigration.com/usa/1_eng_kit_asylum.html, 18.04.2003, p.1

[5] Дипломатический словарь, главная редакция А.А. Громико, А.Г. Ковалев, П.П.Севостьянов, С.Л.Тихвинский, том III, изд. "Наука", Москва, 1986, стр. 494.

[6] Martha E.Gimenez, The Politics of Exile: Class, Power, and the "Exiliic", http://eserver.org/clogic/2003/gimenez.html, 17.08.2004, p. 3.

[7] Martha E.Gimenez, նշվ. աշխ., p. 4.

[8] Հայկական հարց, հանրագիտարան, խմբ. վարիչ Ամալյա Պետրոսյան, Հայկական Հանրագիտարանի գլխավոր խմբագրություն, Երևան, 1996թ., էջ 353:

[9] Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն, Գլուխ 2, «Մարդու հիմնական իրավունքներն ու ազատությունները» Հոդված 14, Երևան, «Ամարաս» հրատարակչություն, 2000, էջ 7:

[10] Տես՝ «Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն (փոփոխություններով)», Նախագիծ, *Հավելված* «Տեսակետ-ՍԻԺԻ-ի» 11-րդ համարի, Երևան, «Փրինթինֆո» հրատ., Մայիս 2003, էջ 6:

[11] N.A. Maryan Green, International Law, 3rd edition, PITMAN publishing, London, 1987, p. 97.